ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԳՐԻԳՈՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Իսկանդարյան,

ի պատասխան Ձեր 19.08.2025թ. հ.192-2025թ. գրության՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտում հսկողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հարցադրումների կապակցությամբ, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցները վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 137.9-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան վարչարարությունն իրականացնում են Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ լիազորություններ վերապահելու դեպքում: Այն աշխատակիցներին, որոնց չի վերապահվել համապատասխան լիազորություն, չեն կարող իրականացնել համապատասխան վարչարարություն և որի վերաբերյալ նոր հավելվածը՝ աշխատակիցների ցանկը ներկայացվել է աշխատակազմի իրավաբանական վարչություն՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ, լիազորություններ վերապահելու համար:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը սահմանում է Երևան քաղաքի ավագանին:

Ծառայության ղեկավար կազմի կողմից աշխատանքների բաշխման միջոցով ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Ծառայության կանոնադրությամբ Ծառայությանը վերապահված այլ գործառույթների համար խոչընդոտներ չստեղծելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ